երջանկացեալ կենաց և զուարթ, և բոլոր քաղաքը պիտի օրհնէ զնա լիսբերան։

1699 ին Կամենից նորէն Լեհաց անցաւ, և 'ի 18 սեպտեմբերի՝ նոյն տարին, աստ և անդ ցիր և ցան Կամենիցցիք մեծաւ ուրախութեամբ դարձան իրենց ծննդեան տեղին։ Սորա առաջնորդ և պարագլուխն էր Մարտինոս Պոկուշ (Պոդոսովիչ) ծերունի հայ զօրավարն, սոցա հետ էր Հայր Միքայէլ վարդապետը, որ իւր ծոցը կը կրէր երկու Հայ ազնուականաց կտակները, որք Կամենիցի կարօտով, յօտարութեան մէջ թողել էին ոսկորնին, Խոցիմիրսքի և Բուտագովիչ։

Սոցանէ առաջինն՝ սեփական տունը 'ի Կամենից՝ շրջապատ գետնովը՝ կը թողուր Ս. Երրորդութեան կարգի կրօնաւորաց, յորմէ էր և ինքն Միքայէլ վարդապետ. այս պայմանով, որ իւր ձեռատունկ կակղի ծառոց խնամ տարուի, վասն զի այլազգիգ ևս խնայել, միանգամայն սիրել էին նոցա հովանին 1։ Մարգարիտէ իւր միակ դստեր կը թողուր Իվովի տունը և այլ ամենայն շարժական ստացուածք։ Բուտագովիչ ծերունին ևս, որոյ նոյնպէս խոստովանահայր եղած էր Միքայէլ վարդապետ, նոյն կարգին համար նոր շինուելու վանքին կը թողուր 500 զլորի։ Այս ծերունի հայազգիս՝ մեծ փափագ ունէր վերստին տեսնել Սմոթրիչ գետոյն միջավայր կղզիացեալ Կամենիցը, և

1. Խոցիմիրսքի հայկազնեան տան տեղը կայ այժմ գեղեցկաշէն եկեղեցի 'ի պատիւ Ամենասուրբ Երրորդութեան, և նորա ձեռատունկ կակղիք ցարդ կու սփռեն իրենց մեծատարած շուքը այդ եկեղեցւոյն և նորա շրջակայ բնակութեանց վրայ։